ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բաժնի գործառույթներից և առաջադրված խնդիրներից բխող աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ծառայությունների բարելավման և ոլորտային ծրագրերի իրականացման ապահովմանը:

- Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստվել և շրջանառության մեջ են դրվել պաշտոնական գրություններ, տեղեկանքներ, պատասխանների նախագծեր և այլ փաստաթղթեր: Իրականացվել է պետական կառավարման մարմիններից, այդ թվում՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից, Ազգային ժողովից, այլ գերատեսչություններից, ինչպես նաև քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված գրությունների և դիմումների ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ պատասխանների և համապատասխան տեղեկատվությունների նախապատրաստում:
- Իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի և փաստաթղթերի ուսումնասիրություն, ինչպես նաև դրանց վերաբերյալ մասնագիտական առաջարկությունների, դիտարկումների և եզրակացությունների նախապատրաստման աշխատանքներ:
- Իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրության, ընդունման, դրանց վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման

աշխատանքներ: Մասնավորապես՝ իրականացվել է «Աստղավարդ» ՀԿ-ի, «Աուտիզմ ազգային հիմնադրամ»-ի, «Երջանկության ճանապարհ» ԲՀԿ-ի, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և «Փրկություն» ԲՀԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծություն և դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի նախապատրաստում:

- Շարունակվել է համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ՝ մասնակցելով ոլորտային աշխատանքային հանդիպումների, քննարկումների և նախաձեռնությունների ձևավորմանն ուղղված գործընթացներին:
- Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզում ստեղծվող Անկախ կյանքի կենտրոնի գործունեության կարգավորման վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Անկախ կյանքի կենտրոնի գործունեության կարգը և պայմանները հաստատելու մասին» հրամանի նախագծի մշակման և լրամշակման աշխատանքներ: Նախագիծը դրվել է ներքին շրջանառության մեջ, ներկայացված առաջարկություններն ու դիտարկումները ուսումնասիրվել և ամփոփվել են, որից հետո լրամշակված նախագիծն ուղարկվել է արտաքին շրջանառության՝ շահագրգիռ գերատեսչությունների կարծիքների ստացման նպատակով:
- Անկախ կյանքի կենտրոնի ձևավորման շրջանակում շարունակվել են կենտրոնի գործունեության կազմակերպական և գործառնական մոդելի ձևավորման աշխատանքները, այդ թվում՝ կառուցվածքի, կառավարման մեխանիզմների, մատուցվող ծառայությունների փաթեթի, ինչպես նաև ներքին ընթացակարգերի մշակման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները նպաստել են բաժնի առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացմանը, ոլորտային գործընթացների համակարգմանը և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ծառայությունների զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների առաջմղմանը:

15.07.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան

Գլխավոր մասնագետ՝